# Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Մ

Խնկոյան համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| Խնկոյան | ավագանու հերթական նիստ | 09.03.2020թ. | 11:30 | Խնկոյանի համայնքապետարան (գ. Խնկոյան 1 փ. 19 շ.) |

ՆԱԽԱԳԻԾ

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ.

ՄԱՐՏԻ 9-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----------------------------------------------------------

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 9-ի հերթական նիստի օրակարգը.

1. Խնկոյան համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 9-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

Զեկ. Վ. Համբարձումյան

2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ. Վ. Համբարձումյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

------------------------------------------------------------------------

/Զեկ. ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 17-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով 03.02.2020 թվականին ստացված դիմումը և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի 07.02.2020 թվականի N 3 եզրակացությունը՝ Խնկոյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված ՀՀ Լոռու մարզի Խնկոյան համայնքի
ավագանու 2020 թվականի մարտի 9-ի N 12-Ա
որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1. Ռուզաննա Վարդանյան Վահանի քսանհինգ հազար դրամ, / սոց. օգնություն/: